ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE20-D993-4032-9ED1 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ԵԴ2/13513/02/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

10 փետրվարի 2026թ.

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Փրայմ Մեդիքալ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 11.12.2025թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումը՝ գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Փրայմ Մեդիքալ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. դեկտեմբերի 17-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 11.12.2025թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումը՝ գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը դատավոր Գ. Վարդանյանին է մակագրվել 2025թ. դեկտեմբերի 17-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. դեկտեմբերի 18-ին:

Դատարանի 2025թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Որոշումը հայցվորի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան) 2026թ. փետրվարի 3-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է և որոշվել է վերացնել թիվ ԵԴ2/13513/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2025թ. դեկտեմբերի 23-ի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը:

Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2026թ. փետրվարի 6-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2026թ. փետրվարի 9-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, իսկ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Տվյալ պարագայում Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքեր չկան, հետևաբար՝ գալիս է այն եզրահանգման, որ հայցադիմումը դատարանում պետք է ներկայացված համարել 2025թ. դեկտեմբերի 17-ին և ընդունել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Փրայմ Մեդիքալ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 11.12.2025թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումը՝ գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Մեդպրո» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2025թ. դեկտեմբերի 17-ին:

Թիվ ԵԴ2/13513/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026թ. մարտի 6-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2026.02.10 10:26:57 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am